ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի ղեկավարի 2016թ II-րդ կիսամյակում կատարած աշխատանքները:

29.12.2016թ Քաղցրաշեն համայնքում տեղի ունեցան հանրային լսում, նախագահությամբ համայնքի ղեկավար՝ Վ. Գյուլամիրյանի, քարտուղարությամբ աշխատակազմի քարտուղար՝ Վ. Արարատյանի:

Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրենը, ամբուլատորիայի տնօրենը, համայնքի բնակիչներ:

Լսեցին՝ Քաղցրաշեն համայնքի ղեկավար Վ. Գյուլամիրյանի հաշվետվությունը 2016թ II կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2016թ II կիսամյակում համայնքապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 76 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գ համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ, տրվել են համապատասխան լուծումներ

Համայնքապետը ստացել է 56 պաշտոնական նամակներ և գրություններ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

Բնակիչներին տրվել են 360 տեղեկանք:

Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի և սահմանների ճշգրտման աշխատանքներ:

Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են.

Մշակույթային միջոցառումներ,Ամանորյա միջոցառումներ, նվերներ -1229,3 դրամ:

Սպորտային միջոցառումներ - 570,0 հազար դրամ

Կառավարման մարմնի պահպանում(լույս և գազ, ջուր, կապ, աշխատավարձ) և այլն – 15877,8հազար դրամ

Մանկապարտեզ (աշխատավարձ). – 2476,2հազար դրամ:

Երաժշտական (աշխատավարձ)– 8069,2 հազար դրամ:

Աղբահանության նպատակով ծախսվել է – 648,0 հազար դրամ:

Դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ - 1015,0 հազար դրամ:

Եկեղեցու կառուցման աշխատանքների ֆինանսավորման համար - 4750,1 հազար դրամ:

Սոցիալապես անապահով անձանց և հուղարկավորության -5939,0 հազար դրամ

Հանրակրթական ուսուցման համար – 397,8 հազար դրամ

Ջրային կառույցի շահագործում և պահպանում - -958,0 հազար դրամ

Մանկապարտեզի դռների և պատուհանների հիմնանորոգման համար - 7911,0հազար դրամ

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության համար - 294,0 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ